Մրցույթ՝ Երևանի «Երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Հայոց լեզու և գրականություն>> (10 դասաժամ), <<Ռուսաց լեզու>> (10 դասաժամ), <<Տեխնոլոգիա>> (5 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար՝ 3Х4 չափի,
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմտում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համլրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թ. դեկտեմբերի 6-ից 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 16:00-ը բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա՝ **2023 թ. դեկտեմբերի 21-ին՝ ժամը 12:00-ին, «Երևանի երաժշտական թիվ 13 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում**: Տեղեկությունների համար զանգահարել՝ /010/ 58-18-94 հեռախոսահամարով: